ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԸ

Մայիսի 6-ին, Երևանում, Միությունների տան դահլիճում, առավոտյան ժամը 12-ին, կայացավ Խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական կոմիտեի ընդլայնված նիստը, որին մասնակցում էին արվեստի, գրականության, գիտության անվանի գործիչներ և հասարակայնության բազմաթիվ ներկայացուցիչներ։

Խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական կոմիտեի նիստին ներկա էր նաև Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերապատիվ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանի, որը նիստում, հանուն Վեհափառ Հայրապետի, հանդես եկավ խաղաղության նվիրված կրոնաշունչ բովանդակալից ճառով։

Սրբազան հայրը խաղաղության նվիրված իր ճառում նշեց, որ խաղաղությունը «մարդու համար անհրաժեշտություն մըն է, հասնելու համար բարձր կատարելության, և այն, իբրև հոգեկան պահանջ, ամեն բանե առաջ յուրաքանչյուր մարդու խղճմտանքի հանգրստությունն է։ «Խաղաղութիւն արարէք ընդ միմեանս»,—կըսե Պողոս առաքյալ։ Հոն, ուր խաղաղությունը կթագավորե, մարդոց բոլոր գործերը առավել ևս կարդյունավորվին։ Խաղաղության սերմերը շուտով կպտղաբերին և մարդկային կյանքը կդառնա տանելի և աշխարհեն կվերնան թշվառությունն ու ատելությունը։ Ահա այս ոգիով Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, իր երգերով, աղոթքներով և շարականներով, կոչ կուղղե իր հավատացյալներուն, որպեսզի ապրին խաղաղության մեջ և կաղոթե շարունակ «Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի։

Հայ ժողովրդի ծոցեն ծնած Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, իր հարազատ ժողովուրդին հետ միասին, շարունակ փնտռած է խաղաղությունը։ Այդ ոգին մեզի կուգա դարերու մեջեն մինչև մեր օրերու հայրապետները։

Մանավանդ այս օրերուն խաղաղության համար եռանդուն գործիչ կհանդիսանա Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը, որ Իր սրբատառ կոնդակներուն և քարոզներուն մեջ կոչ կուղղե բոլոր աշխարհին և մանավանդ Իր հավատացյալ զավակներուն, պատգամելով, «Խաղաղութիւն արարէք ընդ միմեանս, եղբարք մեր սիրելիք»։ Ու մեր ձայնը կմիացնենք խաղաղության համար պայքարող բազմամիլիոն մարդոց ջանքերուն և կպահանջենք փակել պատերազմի ճանապարհները, կանխել ոճիրներն ու ավերածությունները, որոնք կպատճառեն բնաջնջել մարդկության կողմե ստեղծված հոգևոր, իմացական արժեքները և խլել մարդկային բազմաթիվ կյանքեր։

Թող աստվածային սերը և միությունը թագավորե մարդոց, ժողովուրդներու և պետություններու միջև»։

Նիստի մասնակիցները ջերմ ծափահարությունների տակ ընդունեցին ողջույն՝ ուղղված Խաղաղության Համաշխարհային Խորհրդին և Դիմում՝ կառավարություններին՝ դադարեցնելու միջուկային զենքի փորձարկումները։